

Ղ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԱՏՐԻԱՐԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
16—17-ՐԴ ԴԴ.

Վաղագույն տեղեկությունները Մոսկվայում գտնվող հայերի մասին հանդիպում են 14-րդ դ. երկրորդ կեսից: Ինչպես գրում է ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, «ոչ մի ուրիշ ռուսական միջնադարյան քաղաքում մենք չենք հայտնաբերի ժողովուրդների այդպիսի խաչաքարներ խառնուրդ, որպիսին կար Մոսկվայում, որովհետև այնտեղ միմյանց էին բախվում ամենատարբեր տարրեր. արևմուտքից՝ գերմանացի և լիտվացի հյուրեր, արևելքից՝ թաթար, միջին ասիացի ու հայ վաճառականներ, հարավից՝ իտալացիներն ու հույները»¹:

Հետազոտողների ուշադրությունն են գրավել ռուս աղբյուրներում հաճախ հիշատակվող «սուրոժցի հյուրերը»: Վերլուծելով նրանց անուններն ու լրացուցիչ տվյալները՝ ժառանգների, բնավորության ու գործունեության մասին (արևելյան ապրանքների վաճառք), Հայաստանի Հանրապետության ակադ. Լ. Ս. Խաչիկյանը եկավ այն եզրակացության, որ «սուրոժցի հյուրեր» էին կոչվում Ղրիմից եկած հայ վաճառականները, որոնք բնակվում էին Կափա քաղաքում ու հաճախ էին ժամանում Մոսկվա և անգամ մշտական բնակություն հաստատում այնտեղ:

Ըստ ռուս տարեգրությունների տվյալների, Դմիտրի Դոնսկոյը՝ թաթար Բաթու խանի դեմ իր արշավանքի մասնակից դարձ-

րեց «տաա սուրոժցի այրեր», որպեսզի նրանք, գիտենալով թաթարների լեզուն ու բարբերը, օգնեին բանակցություններ վարելու նրանց հետ, իսկ հաղթանակի դեպքում այդ մասին պատմեին «հեռավոր երկրներում»՝ որպես ականատեսներ²:

Նշանակալից է հայ ռազմաջոկատների մասնակցությունն՝ իրենց հրամանատարների հետ՝ թաթարական Մամայ Խանի ջախջախմանը, որի մասին պատմում է «Ասք Կուլիկովյան ճակատամարտի մասին»-ը: «Այդ ցույերը չեն, որ մոռնում են Կուլիկովյան դաշտում, այլ պարտվել են Մեծ Դոնի մոտ, ջարդվել ռուս իշխաններն ու բոյարներն ու Մեծ իշխանի վոյեպոդաներն ու Բելոգերսկի իշխանները՝ պիղծ թաթարների կողմից. Ֆյոդոր Սեմյոնովիչը, Տիմոֆեյ Վոլոսիչը, Սեմյոն Միխայլովիչը, Միկուլա Վասիլևիչը, Օնդրեյ Սերբիգովիչը, Միխայլո Իվանովիչը և այլք՝ մեծ ջոկատից, իսկ մյուսները պառկած են Դոնի ափերին»³:

Նշենք, որ Կիևյան, հետագայում և Նովգորոդյան Ռուսիայի օրոք ռուս և հայ եկեղեցիների տարաձայնությունների պատճառով Ռուս ուղափառ եկեղեցին այն հայերին,

¹ Тихомиров М. Н. Средневековая Москва в XIV—XV вв. М., 1957, с. 121.

² Хачикян Л. С. «Гости-сурожане» в русских летописях и Сказании о Мамаевом побоище (к вопросу об их национальной принадлежности. В кн.: Русская и армянская средневековые литературы. Л., 1982.

³ Сказание о Куликовской битве. В кн.: Воинские повести Древней Руси (Под ред. В. П. Адриановой-Перетц). М.—Л., 1949, с. 37.

որոնք դավանում էին հայ ազգային հավատամքը, ընկալում էր որպես քրիստոնեությունն՝ ուրացող ուխտադրուծներ: Այլ էր այն հայերի հարցը, որոնք ընդունել էին երկաթնակությունը ու արդեն պատկանում էին հույն եկեղեցուն. նրանց ընդունում էին որպես դավանակից ու չէին տարբերում/հույներից: Սակայն Մոսկովյան Ռուսիայի հոգևորականությունը, որն ավելի ու ավելի էր համակվում կրոնի հանդուրժողականությամբ, սկսեց ավելի բարյացակամ վերաբերվել հայ միաբնակներին: Համենայնդեպս այն ժամանակվա ռուսական աղբյուրներում չկա դատապարտող և ոչ մի բառ Դմիտրի Դոնսկոյի հասցեին՝ օտարերկրացիների հետ նրա համագործակցության ու բարեկամության պատճառով, նաև չկա և ոչ մի թշնամական ակնարկ, որով այդ օտարերկրացիք դատապարտվեին իրենց այլադավանության կամ աղանդավորության համար: Ընդհակառակը, նրանք առաջին անգամ դրականորեն են պատկերված Նիկոնովյան տարեգրության էջերում որպես թաթարների հանդեպ տարած մեծ հաղթանակի լրաբերներ:

Ռուսական աղբյուրներում արձանագրված առաջին տեղեկությունը Մոսկվայում հայերի բնակության մասին վերաբերում է իշխան Վասիլի 1-ին Դմիտրիևիչի (1389—1425) կառավարման տարիներին: 1497 թ. Տարեգրությունների ժողովածուի «6898 թրվական»-ով (1390 թ.) նշված գրառման մեջ հայտնվում է միտրոպոլիտ Կիպրիանի Մոսկվա ժամանելու մասին, որից հետո հայտնվում է հետևյալը. «Հունիսի 22-ին այրվեց Մոսկվայի արվարձանը ոմն հայ Աբրահամի կողմից»⁴: Նույն տեղեկությունը որոշ մանրամասներով հայտնում է Նիկոնովյան տարեգրությունը. «Նույն ամռանը՝ Պետրոսի ծոմի ժամանակ, հունիս ամսի 22-րդ օրվա կեսօրին այրվեց Մոսկվայի արվարձանը ոմն հայ Աբրահամի կողմից, ու այրվեցին մի քանի հազար երդ»⁵:

Վասիլի 1-ին Դմիտրիևիչի իշխանության օրոք տեղի է ունեցել Գրյունվալդի ճակատամարտը, և հատկանշական է այն փաստը, որ այդ ճակատամարտում մասնակցություն ունեցան նաև հայերը, իսկ այդ փաստըն իր հերթին հաստատում է մի ենթադրություն, որի համաձայն գոյություն ունեին հայ ռազմաշոկատներ, որոնք անցել ծառայում էին Դմիտրի Դոնսկոյին ու մասնակցել էին Կուլիկովյան ճակատամարտին⁶:

Մոսկովյան հոգևորականության՝ դեպի միաբնակ հայերն ունեցած վերաբերմունքի փոփոխման մասին է վկայում Ռուս եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների 1447 թ. դեկտեմբերի 29-ի ուղերձը Ուգլիչի իշխան Դմիտրի Յուրևիչին, որտեղ կոչ էր արվում վերջ դնել գժտություններին: Այդ ուղերձում որպես օրինակ հիշատակվում է հայոց թագավոր Տրդատը, որը բանտարկեց հայ լուսավորիչ Գրիգորին և այդ պատճառով դարձավ վարագ, սակայն ապաշխարությունից հետո նա կրկին ստացավ մարդու կերպարանք ու «մկրտվեց ինքն էլ, ու մկրտեց իր ամբողջ թագավորությունը»: Այս ուղերձում Հայոց Գրիգորը ներկայացված է ոչ միայն որպես մի սուրբ, որին Դանիել մարգարեի հետ մեկտեղ շնորհվել է Աստծո նշանը, այլ և որպես Աստծո օրենքների համար մաքառող և ի վերջո որպես Ռուսիայի սուրբ հովանավորողներից մեկը:

1453 թ. Կոստանդնուպոլսի զավթումը թուրքերի կողմից և Բյուզանդիայի անկումը, «Մոսկվա—Երրորդ Հոռն» սուրբ գաղափարի ծնունդն ու հիմնավորումը, որի համաձայն «ազարացիների» լծի տակ կեղեքվող քրիստոնյա ժողովուրդները պիտի ազատագրվեին ու համախմբվեին Ռուսիայի շուրջ—այս ամենը պայմանավորեց ոչ միայն ռուս հոգևորականության՝ դեպի հա-

⁶ 14-րդ դարում Արևմտյան Ուկրաինայում գոյություն ունեցող նման ջոկատների մասին, որոնք անվանում էին իրենց «Կույս Մարիամի ապետներ» հայտնում է Ն. Դարոնովիչը (տե՛ս Даронович Н. Армяне в Подолии. Труды Комитета для историко-статистического описания Подольской епархии, вып. 2, с. 163). Հայտնի է նաև, որ հայ զինվորները՝ լեհերի ու լիտվացիների հետ՝ 1376 թ. օգնել են չեխերին:

⁴ ПСРЛ. М.—Л., 1963, т. 28, с. 86.

⁵ ПСРЛ. СПб., 1897, т. 11, с. 122; ПСРЛ. СПб., 1913, т. 18, с. 140.

յերն ու նրանց եկեղեցին ունեցած վերաբերմունքի հեղաշրջումն, այլ և ռուս ժողովրդի այդ փրկարար դերի ավելի խորը գիտակցությունը մույն հոգևորականության կողմից:

Այդ համգամանքը զգացվեց արդեն Իվան 3-րդի (1462—1505) գահակալության օրոք, երբ Կաթալի հայ գաղութը մեծ մասնակցություն ունեցավ Մոսկվայի ու Ղրիմի խանի միջև քաղաքական ու տնտեսական կապերի իրագործման մեջ: Առանց մի շարք աշխատություններում քերված մանրամասնությունների մեջ⁷ խորանալու, նշենք միայն, որ ավելի հաճախակի է դառնում հայերի ժամանումը Մոսկվա ու նրանց մշտական բնակություն հաստատելն այստեղ:

Հիշատակենք նաև հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների ոլորտում մի նշանակալից իրադրություն, որը տեղի ունեցավ մույնպես Իվան 3-րդի օրոք. Կրեմլի Բլագովեշչենսկի տաճարի զարդանկարներում Հայոց Գրիգորի որմնանկարը տեղադրելու փաստը,⁸ որը չէր կարող կատարվել առանց մոսկովյան հոգևորականության համաձայնության ու օրհնության⁹:

Իվան 4-րդ Ահեղի (1547—1588) գահակալության տարում Էջմիածնում կաթողիկոս Ստեփաննոս Սալմաստեցու (1502—1567) նախաձեռնությամբ հրավիրվեց մի գաղտնի խորհրդակցություն, որի նպատակն էր՝ քննարկել Հայաստանի ծայրահեղ ծանր վիճակն ու նրա ազատագրման ուղիները: Այս խորհրդակցությանը մասնակցող ավատատերերն ու գյուղերի ավագները, հոգևորականության ու առևտրականության ներկայացուցիչները որոշեցին խնդրել կաթողիկոսին, որ նա մեկնի Եվրոպա ու այնտեղ օգ-

նություն գտնի: Եվրոպայում Ստեփաննոսը ամտաբերության համդիպեց ու այնուհետև մեկնեց Լեհաստան, այնտեղից էլ՝ Մոսկվա¹⁰: Մնում է անհայտ, թե ռուս հոգևորականներից ո՞ւմ հետ էլ նա համդիպում ունեցել Մոսկվայում և ի՞նչ բանակցություններ է վարել, սակայն Ամենայն Հայոց կաթողիկոսի Ռուսաստանին դիմելու փաստն ինքը ասես դարձավ Հայ և Ռուս եկեղեցիների մերձեցման սկիզբ:

Մոսկվայի հայկական գաղութի նոր համալրումը կապված է Իվան 4-րդ Ահեղի Կազանյան պատերազմի հետ: «Степенная книга»-ում և «Կազանի պատմության» մեջ պատմվում է այն մասին, թե Կազանի պաշարման ժամանակ այնտեղ կային 5000 «օտարերկրացի վաճառական, բուխարացի ու շամախեցի, թուրքեր ու հայեր և այլք, որոնք չէին մեկնելու քաղաքից դեպի իրենց երկրները մինչև ռուս զորքերի գալը...»: Ավելին, իմանալով, որ հայերը գիտեն հրետամով հետ վարվելաձևը, նրանց ստիպում էին կովել ռուսների դեմ: Բայց հայերը «չըկամենալով, հերքում էին, որ տիրապետում են այդ գործին»: Այնժամ թաթարները շրջափակեցին գամեցին նրանց թնդանոթներին ու «մերկացրած սրերով կանգնած նրանց գլխավերևում մահով էին ահաբեկում նրանց ու ստիպում թնդանոթներից կրակ արձակել ռուս զնդերի վրա»: Սակայն հայերը «կրակում էին վրիպումներով, գործից անգիտակների մման, ու զնդակները մերթ հեռու մերթ մոտ էին թափվում, հազիվ թե որն է մեկին սպանելով»: Կազանի գրավումից հետո Իվան 4-րդ Ահեղն «այս բանի համար ներում շնորհեց» նրանց, թողնելով գնալ իրենց հայրենիք¹⁰:

Հեղինակը ջերմ գովասանքով է պատմում հայերի վարքագծի մասին ու մի բանով իսկ չի հիշատակում նրանց «ալլադա-

⁷ Տե՛ս Валахан Г. А. Россия и народы Закавказья. М., 1976; Խաչիկյան Լ. Ս., Հայերը հին Ռուսիայում ու Մոսկվա տանող ճանապարհներին, — Բանբեր Մատենադարանի, Եր., 1980,] ամփոփումը՝ ռուսերեն և անգլերեն: Տե՛ս նաև Աղաջան Մ. Պ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ճակատագրում, Եր., 1984.

⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Айвазян К. В. История отношений русской и армянской церквей в средние века (XI—XVII вв.), Ереван, 1989.

⁹ Տե՛ս Очерки истории СССР, Конец XV—начало XVII в. М., 1955, с. 850—851. որ մեջբերվում է նաև Արիջան Ղ., Կամենեց, Վլենտիկ, 1895, էջ 185:

¹⁰ Казанская история (Подгот. текста, вступит. статья и примеч. Г. И. Моисеевой), М.—Л., 1954, с. 134—135.

վանությունը», ընդհակառակը՝ մշում է մը-
րանց հավատարմությունը ոռումերին, մը-
րանց հերոսությունը, երբ ամենքի աչքի
առջև մրանք կրակում էին այնպես, որ գըն-
դակները չհասնեն ոռուական գորքին: Այդ
իսկ պատճառով Իվան 4-րդը, թույլ տալով
օտարերկրացի վաճառականներին գնալ ի-
րենց հայրենիք, հայերին վերաբնակեցրեց
Կազանից Մոսկվա, ուր մրանց համար տեղ
հատկացվեց Բելի քաղաքում ու մասն տըր-
վեցին հատուկ արտոնություններ: Տարեգը-
րությունները հայտնում են, որ Իվան 4-րդ
Ահեղին՝ մայր քաղաք մրա մտնելու ժամա-
նակ այլադավան դիմավորողների թվում կա-
յին մասն հայեր¹¹:

Կազանի գրավումից երկու տարի անց
(1552 թ. սեպտեմբերի 30-ին) ի հիշատա-
կումն ոռու և համաշխարհային պատմության
այդ մեծ իրադարձության Մոսկվայի Կար-
միր հրապարակում, Կրեմլից դուրս, գլխա-
վոր Ֆրոլովյան (այժմ՝ Սպասսկի) դարպա-
սի մոտ, Կրեմլը շրջապատող բարդախրա-
սի վրա դրվեց Պոկրովի ու Սուրբ Վասիլի
Երանելու տաճարների հիմքը¹²: 1557 թ.
կառուցումն ավարտվեց, ու տաճարի վրա
խոչացող ինը գմբեթներից մեկը տրամա-
դրվեց Հայոց Գրիգորի եկեղեցուն: Տաճարի
շուրջ կառարված արձանագրության մեջ ի
թիվս մյուս սրբերի հիշատակվում է մասն
«սուրբ մարտիրոս՝ Մեծն Հայոց Գրիգորի»
անունը, իսկ տաճարի ներսում գտնվում էր
ինքը՝ եկեղեցին, որը պահպանված է մինչև
այսօր¹³:

Հայոց Գրիգորի անունով հիմնադրվեց
ևս մի եկեղեցի՝ Կազանում, սակայն այդ ե-
կեղեցին, ցավոք, չի պահպանվել:

¹¹ ПРСЛ. СПб., 1903, т. 19 («Кавказский ле-
тописец»), т. 176.

¹² Зб'и Веланкин А. С. О Покровском и Св.
Василия Блаженного соборе в столичном граде
Москве. Основанные на верных фактах и по-
черпнутые из достоверных источников. М., 1867;
Кузнецов И. И. Покровский (Св. Василия Вла-
женного) собор. в Москве. М., 1900; Сулаев В. В.
Церковь Василия Блаженного в Москве. СПб.,
1912 и др.

¹³ Մանրամասն տե՛ս Իստորիա օրոհոհոնի րու-
սոյ և արմանոյ ցարաւոյ...

Ակնհայտ է, որ ոռու հոգևորականությու-
նը, որը ղեկավարում էր տաճարի կառու-
ցումն ու եկեղեցիների տեղադրումը, ամե-
նայն բարչացականությամբ վերաբերվեց
Մոսկվայում հայերի վերաբնակությանն ու
մրանց լուսավորչի մեծարմանը:

2.

Այդպիսով, արդեն 16-րդ դարի երկրորդ
կեսին Ռուս եկեղեցու ազդեցության տակ
էին գտնվում զգալի քանակությամբ հայեր,
որոնք ապրում էին ինչպես Մոսկվայում,
այնպես էլ Վոլգայի երկայնքով տեղադր-
ված ու Ռուսաստանին միացրած քաղաքնե-
րում, որպիսին էր Աստրախանը, ինչպես
մասն Հյուսիսային Կովկասի մարզերում:

1589 թվականին Մոսկովյան Պատրիար-
քության կազմավորումն ունեցավ բարենը-
պաստ ազդեցություն հայ բնակչության ճա-
կատագրի վրա, տեղծելով հիմքեր՝ Հայ և
Ռուս եկեղեցիների մերձեցման համար:

Թագավոր Միխայիլ Ֆյոդորովիչի (1613—
1645) օրոք սկսվեց հայերի մի նոր ներհոսք
դեպի Մոսկվա: Հատկանշական է ոմն Սար-
գիսկո Ավանեսովի խնդրագիրը, որն արձա-
նագրված է 1632 թվականով Պողոսկի Գե-
րատեսչությունում. «Էսելով քո թագավորա-
կան ողորմածության մասին մեր՝ օտարերկ-
րացիներին համոզեալ, որ թողել ենք մեր
ապրուստը, ցեղն ու տոհմը, քո թագավո-
րական դեսպան Պրոկոֆի Վասկովի հետ ե-
կել են՝ քեզ, թագավորիդ հավատարիմ ծա-
ռաչելու»¹⁴: Մի ուրիշ խնդրագրում, որը մըշ-
ված է 1638 թ. ապրիլի 20-ով, մա հայտնում
է, որ ապրել է թուրքական սուլթանի ապա-
րանքում լավ պայմաններում, սակայն չդի-
մանալով կրոնական ու ազգային հետապըն-
դումներին փախել է Դրիմ, որտեղ փրկա-
գնել է մի գերված ոռու կին, ամուսնացել
մրա հետ ու եկել Մոսկվա: Դիմելով թագա-
վորին մա խնդրում է հատկացնել իրեն՝ «իր

¹⁴ Центральный государственный архив древ-
них актов (именител' ЦГАДА), ф. Сношения
России с Арменией, 1632, л. 1.

ծառային, թագավորական ռոճիկ ու սր-
նունդ»¹⁵։

Ավանեսովն, ինչպես նաև մինչ այդ՝
1627 թ. Վրաստանից ժամանած հայ Ռոման
Բեդրինն ու նույնպես Վրաստանից 1634-ին
եկած Ծահնագարը¹⁶ Մոսկվայի պատրիարք
և թագավորի կնքահայր Ֆիլարետի համա-
ձայնությամբ անցան Ռուս եկեղեցու հովա-
նավորության տակ և ընդունվեցին պալա-
տական ծառայության։

Մոսկվա ժամանած հայերի ուղղափա-
ռության / անցնելու նման արձանագրված
դեպքերը տասից ավելի են, սակայն ոչ մի
տեղ ոչ մի տվյալ չկա այն մասին, թե ու-
սական իշխանությունները երբեք միջոցներ
են ձեռնարկել՝ նրանց դավանությունը փո-
խելու նպատակով։ Նույնպես ազատ, ա-
ռանց հետապնդումների Մոսկվայում բնա-
կություն էին հաստատում այն հայերը, ո-
րոնք հավատարիմ էին մնում իրենց ազգա-
յին եկեղեցուն, ու թեկուզև ծագում էին կր-
թնական ծիսակատարություններն իրա-
գործելու դժվարություններ, այնուհանդերձ
դրանք հաղթահարվում էին Մոսկովյան
Պատրիարքության օժանդակությամբ։

Համեմատության կարգով մշենք, որ Հա-
յաստանում, ինչպես նաև հարևան Վրաս-
տանում, որոնք գտնվում էին Պարսկաստա-
նի ու Թուրքիայի դաժան լծի տակ, անց էր
կացվում միանգամայն հակառակ կրոնա-
կան քաղաքականություն. տնտեսական ու
արտատնտեսական ճնշումներով, որոնց մի-
ջոցների թվում էին ծանր հարկը, սեփակա-
նությունից զրկելը, մահապատիժն ու սպա-
նությունները և այլն, ստիպում էին հրա-
ժարվել քրիստոնեությունից ու ընդունել
մահմեդականություն։ Որոշ չափով մեղմաց-
րած նույն միջոցները կիրառվում էին հայե-
րի հանդեպ նաև Եվրոպայում ցրված հայ-
կական գաղութներում, որտեղ հայերին են-
թարկում էին կրոնական հետապնդումների,
ստիպելով ընդունել կաթոլիկություն։

Մոսկովյան Ռուսիան այն ժամանակ

միակ պետությունն էր, որի բարձրագույն
հոգևորականության՝ Պատրիարքության
հանդուրժողականությունը հնարավորություն
էր տալիս հավատքի համար հետապնդվող
հայերին (ինչպես նաև վրացիներին) ա-
ստատարան գտնել այստեղ։

Առանձնահատուկ հետաքրքրություն են
ներկայացնում հայոց կաթողիկոսների ըս-
կզբնական կապերը Մոսկովյան Պատ-
րիարքության հետ։ 1634 թ. Ղարաբաղի
Գանձասարի կաթողիկոս Պետրոսը դիմում է
վրաց թագավոր Թեյմուրազ 1-ին (1583—
1663), առաջարկելով նրան միացյալ ուժե-
րով արշավանք սկսել Ատրպատականի դեմ
(այժմյան հարավային Ադրբեջանը՝ Իրա-
նում) և ազատագրել այն ընդհուպ մինչև
Թավրիզ՝ խոստանալով դուրս բերել այդ
արշավանքի 40-հազարանոց հայկական
զորք¹⁷։ Ըստ Օլեարիի տեղեկության, Գուշ-
տինիայի դուրս Օստոտ Բրյուգերմանն այդ
խսկ տարիներին վերադառնալով Պարսկաս-
տանից, 1639 թ. բանակցություններ էր վա-
րում ուսական արքունիքի հետ, որոնց ըն-
թացքում հաղորդում է նաև կաթողիկոս
Պետրոսի առաջարկը։ Օլեարին հայտնում է,
որ այդ առիթով Կրեմլում կայացավ գաղտնի
խորհրդակցություն, ըստ երևույթի, մոսկով-
յան հայերի (Գևորգի որդի՝ Ավանեսի ու
Փիլիպոսի որդի՝ Մարկոսի) մասնակցու-
թյամբ¹⁸։

Մյուս փաստը, որը դեռ վերլուծության
կարիք է զգում, հայ աղբյուրների տեղեկու-
թյունն է Բաբերթի հայ վարդապետ Ղազա-
րի մասին, որը Ռուսիա և Լեհաստան կա-
տարած իր այցելության ժամանակ բան-
տարկվեց Լեհաստանում ու այնտեղ էլ բան-
տում մահացավ¹⁹։

Հայանպաստ այդ քաղաքականությունն
ավելի թափ առավ Ալեքսեյ Միխայլովիչի

¹⁷ Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հա-
յաստանի և հայերի մասին, Եր., 1935, հ. 2, էջ 113։

¹⁵ ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1638, л. 2.

¹⁶ Նույն տեղում, ֆ. 155. 1634 г., д. № 2.

¹⁸ Восканян В. К. Армяне в Москве в XV—
XVII вв. М., 1976, с. 32 ուր մեջբերում կա
Օլեարիից, էջ 66, 140—143։

¹⁹ Գրիգոր Ղարանդաղի, Տարեգրություն, Երու-
սաղեմ, 1913, էջ 409—410։

(1645—1676) գահակալության օրոք, որի հետևանքով 17-րդ դարի երկրորդ կեսում Մոսկվայի 200 000 բնակիչներից 8 հազարը հայերն էին:

Ծարունակվում էր նաև ուղղափառությունն ընդունելու ընթացքն՝ այն հայերի, որոնք անցել էին ռուսական ծառայության: Բազմաթիվ դեպքերից մշենք միայն Իվան Ծարսով-Թավաքալովին, որն իր ընտանիքով Պարսկաստանից ժամանեց Մոսկվա ու իր որդի Բորիսի հետ ընդունվեց Պոսոլսկի Գերատեսչություն: Նույն տեղը ծառայության էր անցել նաև հայորդի Դատուդովը (Ալամարցյանը), որը մկրտվելիս ստացավ Վասիլի Ալեքսանդրովիչ անունը, իսկ հետագայում դարձավ փոխփոխ և պալատական սեղանապետ:

Ալեքսեյ Միխայլովիչի օրոք որոշ չափով լուծվեց նաև այն հայերի հարցը, որոնք հավատարիմ մնացին իրենց ազգային եկեղեցուն: Այդ առումով հետաքրքրական է մի փաստաթուղթ՝ Ջի խումբ հայերի 1666 թրվականով մշված խնդրագիրը Ալեքսեյ Միխայլովիչին: Այս խնդրագրում «Հայաստանի Ծահական մարզից եկած Ստեֆկա Մոխսենը, Գրիշկա Մատվենը, Սաֆարկո Նազարովը, Բոգդաշկո Սալթանովը, Բաբկա Թուրեսովը՝ քառասուն հոգու ընկերակցությամբ» հայտնում են այն մասին, թե «սաթի վարպետ» հայորդի Արապետ Մարտինովը պատկած է մահամերձ վիճակում և ոչ մի քահանա չի գալիս՝ ոչ խոստովանանք ընդունելու, ոչ էլ հաղորդություն տալու»²⁰: Այս հանգամանքը կրկին անգամ հաստատում է Մ. Ն. Տիխոմիրովի այն պնդումը, որ շարքային ռուս մարդիկ որևէ ջոկողություն չէին դնում ուղղափառության ու հայ դավանանքի միջև, նրանք դիտում էին ռուսական երկրից հեռու գտնվող հայերին որպես իրենց դավանակիցներ²¹: Միաբնակ հայերի խընդրագիրը թույլ է տալիս նույնն ասել նաև

հենց իրենց՝ հայերի մասին, որոնք նույնպես դիտում էին ռուսներին որպես դավանակիցներ: Խնդրագրի վերջում հեղինակները մշում են, որ իրենց խնդրանքը բավարարելու դեպքում «մեր հայ եղբայրներից շատերը քո թագավորական մեծ անունով կապրեն քո մեծ տիրույթներում՝ Աստրախանում ու Կազանում ու այլուր»²²:

Հետաքրքրական է, որ պատրիարք Նիկոնը նույն 1666 թ.՝ դեռ իր գահագրկվելուց առաջ իր մոտ կանչեց հայերին ու զրույց ունեցավ նրանց հետ: Սրբազանը հարցրեց նրանց. «Ինչպե՞ս եք դուք ծալում ձեր մատները՝ խաչակնքվելիս: Իսկ նրանք երկու մատով էին խաչակնքվում, ինչպես գրված է Հնգամատյանում»²³, բայց ձեռքը տանում էին մախ ձախ ուսին և ապա՝ աջ»: Այնուհետև պատրիարքը հարցրեց. «Իսկ հույները որպես ուղղափառներ ինչպե՞ս են մատները ծալում ու խաչակնքվում»: Հայերը պատասխանեցին, թե եռամատ, սակայն հրաժարվեցին ցույց տալ, թե ինչպես են խաչակնքվում հույները, բացատրելով, որ «ըստ հայկական/ ավանդույթի, ով նրանցից հույների մման երեք մատով խաչակնքվի, նրա ձեռքը պիտի կտրվի»: Այդ հարցումներից հետո վաճառականները գնացին հյուրանոց»²⁴: Նշենք, որ այս գրառման հեղինակը՝ Սիրիիի և Տորոլսկի միտրոպոլիտ Իգնատին, պալքարելով Սիրիիի հերձվածողների ու նրանց գլխավորող հայ քահանա Հովսեփ Աստրոմենի դեմ, դիտավորյալ է վերագրում ազգային դավանանքի հետևորդ հայերին երկմատ խաչակնքվելը, չնայած այն բանի, որ նրանք ի սկզբանե մինչ այժմ խաչակնքվում են երեք մատով: Պատահական չէ, որ պատրիարք Նիկոնը՝ աղանդավորության այդ մոլեգին հակառակորդը սահմանափակվեց այս տեղեկությամբ ու այլևս չսկսեց մերկացումն, այլ խաղաղությամբ ու առանց

²⁰ *ՏԷՍ* Армяно-русские отношения в XVII в. (Подгот. к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авагимова; под ред проф. В. А. Парсамяна). Ереван, 1953, с. 43.

²¹ *ՏԷՍ* Тихомиров М. Н. Средневековая Москва..., с. 143.

²² Армяно-русские отношения в XVII в., с. 43.

²³ Խոսքն այն Հնգամատյանի մասին է, որի վրա հիմնվելով հնադավաններն ապացուցում էին երկմատ խաչակնքվելու ճշմարտացիությունը:

²⁴ Послания блаженного Игнатия, митрополита Сибирского и Тобольского. Казань, 1885, с. 182.

բարդությունների ազատ արձակեց հայ վաճառականներին:

Իսկ ինչ վերաբերում է հայերի խնդրանքին, ապա այն հանգամանքը, որ նրանք մնացին տեղում, իսկ նրանց հայրենակիցների հոսքը դեպի Մոսկվա չընդհատվեց, թույլ է տալիս ենթադրել, որ Մոսկովյան Պատրիարքությունը բավարարեց նրանց խնդրանքը, թույլ տալով, որ ռուս եկեղեցում ռուս քահանաները կատարեն որոշ ծիսակատարություններ:

Հատկապես հարկ է նշել Ալեքսեյ Միխայլովիչի ցանկությամբ 1666 թ. Մոսկվա ժամանած նկարիչ Բոգդան Սալթանովին, որն իր լուսան ունի ռուսական եկեղեցական գեղանկարչության գործում. Նրան Մոսկվա հրավիրելու հանգամանքները հետևյալն են. մի հայ վաճառական նվիրում է Ալեքսեյ Միխայլովիչին Սալթանովի աշխատանքներից մեկը՝ պղնձի վրա փորագրված «Խորհրդավոր ընթերիք» կոմպոզիցիան, որը շատ է դուր գալիս ռուսաց թագավորին: Մոսկվայում Սալթանովին ընդունում են Զինապալատ, հանձնարարելով սովորեցնել «իր արվեստը ռուս աշակերտներին» ու ապահովում են նրան ռոնիկով: Պրեորբատենսկի պալատում Բոգդան Սալթանովին ընդունում է թագավոր Ալեքսեյ Միխայլովիչն ու, հավանաբար, նրա հետ ունեցած զրույցից հետո, ի տարբերություն մյուս օտարերկրացիների, որոնք իրենք էին հոգում իրենց կացարանների հարցը, Սալթանովին հատկացվեց կացարան Պոդոլսկի պալատում, և դրանից բացի տրամադրվեց հանգստատուն՝ մի բան, որ նախատեսված էր միայն արտասահմանյան երկրների դեսպանատների բարձրաստիճանավորների համար: Հետագայում Բոգդան Սալթանովը ձեռք բերեց սեփական տուն Յաուզայի գետաբերանի մոտերքում, 1674 թ. ընդունեց ուղղափառությունը, ստացավ ազնվականի տիտղոս²⁵:

Բոգդան Սալթանովի գեղանկարչական աշխատանքներում մեծ տեղ էին գրավում

սրբապատկերն ու եկեղեցական նկարագարումը²⁶: Թվենք դրանցից թերևս մի քանիսը: 1670 թ. նա ստեղծեց «երկու սրբապատկեր՝ Փրկչի ու Աստվածածնի», 1671 թ. Զատիկի տոնի առթիվ թագավորի համար նկարեց «Անարատ Աստվածածինը Հավերժ Մանկան հետ» սրբապատկերը: 1674 թ. հունվարին նա նկարագարեց «գունավոր հերձաքարով՝ Վոզնեսենսկի վանքի խաչվառի բռնակոթը»: Նույն տարվա Զատիկին նա նկարեց «ի նվեր թագավորին՝ հինգ դրոշ, որոնցից առաջինում պատկերված էր Տիրոջ խաչի մոտ գտնվող Լոգին Սոտնիկը, երկրորդում՝ ազնվագույն իշխան Դովմոնտ Պոկրովսկին, երրորդում՝ Աստծո հովվապետ Միքայելը, չորրորդում՝ ազնվագույն իշխան Գեորգի Վլադիմիրսկին, հինգերորդում՝ մարտիրոս Սեբաստիանը, դրոշների մյուս կողմերում պատկերված էին հինգ աստիճանի խաչեր: 1675 թ. մայիսին արքայազն Ֆյոդոր Ալեքսեևիչի ապարանքում սեղանատախտակի վրա զարդագրել է առակն այն մասին, թե ինչպես «Կոստանդին թագավորը գերվել էր պարսիկների կողմից ու բերվել մեհյան՝ զոհաբերության համար ու փրկվել իր ստրուկ-զինվորի ջանքերով»: 1676 թ. մարտին «նկարագարեց ներկերով մարտիրոս Ֆյոդոր Ստրատիլատի ընթերցասեղանի տապանակը, վերին երիզի մեջտեղում պատկերելով խաչ»: 1678 թ. եկեղեցու պատին որմնանկարեց «մարտիրոսուհի Եվդոկիային և այլ գերագույն բաներ»: Նույն թվի աշնանը նկարագարեց «տարբեր ներկերով ու հերձաքարերով քարե սանդղամուտքն ու Սպասկի վանքի մոտի նույնպես քարե գավիթը»: 1679 թ. ստեղծեց մի որմնանկար Հովան Բելոգրադսկու եկեղեցում: 1680 թ. նկարեց կտավի վրա «Պոլոցկի սրբազույն Աստվածածնի կերպարը», «մարտիրոսուհի Եվդոկիային և ավետարանչա-

²⁵ Молева Н. М. Живописец Богдан (Иван) Салтанов в Москве. — Историко-филологический журнал АН Арм. ССР, 1974, № 1. с. 210.

²⁶ Սալթանովի ստեղծագործության մասին տե՛ս Успенский А. И. Царский живописец и дворянин Иван Иевлевич Салтанов. — Старые годы, 1907, март; Забелин И. Перечень иконописных и живописных работ московских дворцовых и городских мастеров XVII столетия. — Русский художественный архив, 1894, с. 109 и др.

կան առակները: Նույն թվին՝ «Մեծն իշխան Վլադիմիրի մկրտությունը, թագավոր Կոնստանդինի տեսիլքն ու Մանուկների ջարդը»²⁷:

Սակայն Սալթանովը միակ հաջ նկարիչը չէր, որը կատարում էր ոչ միայն արքունիքի, այլ նաև Մոսկովյան Պատրիարքարանի պատվերները: Կարելի է հիշատակել «ղզլւրաշի» (այսինքն՝ Պարսկաստանից ժամանած) հայտորդի Լազար Իվանովիչ Բելսկուն (ազգանունն ու հայրանունը ստացել է մրկորությունից ժամանակ), որը ճանաչված էր որպես 17-րդ դարի հետաքրքրագույն նկարիչներից մեկը ու հանդիսանում էր նկարիչների մի մեծ տոհմի հիմնադիր: 1670 թ. նա Զինապալատում Սալթանովի աշակերտն էր ու շարունակում էր գործել նրա հետ մինչև 1678 թ., այնուհետև դարձավ Կրեմլի պալատներում ու եկեղեցիներում, ինչպես նաև Իզմայլովում գեղանկարչական աշխատանքներ կատարողներից մեկը²⁸: 1679 թ. Լազար Բելսկին ստանում է պատվեր Մոսկովյան Պատրիարքարանից՝ զարդանկարել 70 այսպես կոչված «գորբիլներ» (սապատառախտակներ) Իզմայլովի Պետրով եկեղեցու սրբապատկերների համար, իսկ այնուհետև նույն եկեղեցում ոսկեզօծել ու արծաթազօծել սրբապատկերները: Նա հանձնարարություն է ստանում նաև զարդագրել ավետարանչական առակները Սպասի ու Հովան Բելոգորսկու եկեղեցիներում և առաքելական քարոզները՝ թագավոր Ֆյոդոր Ալեքսեևիչի նոր ապարանքի կտավների վրա:

Մինչև 1680 թ. Լազար Բելսկին զբաղվում էր Իզմայլովի եկեղեցիների հարդարմամբ. ներկազարդում էր հնդկական արքայազն Հոսափի եկեղեցու ցանկապատերը, զարդանկարներ էր կատարում եկեղեցաբեմում, երգչախմբի տեղում, զարդանախշում էր երկաթյա դռները, արծաթազօծում խաչվառների բռնակոթերը: Այս պատվերը կատա-

րելուց հետո ինչ-ինչ պատճառներով նա դադարեց կերպարվեստով զբաղվել ու միայն 1693 թ. կրկին վերադարձավ նկարչությանը. այդ մասին է վկայում նրա խնդրագիրը, որի մեջ նա խնդրում է որևէ պաշտոն Զինապալատում, հայտնելով իր մասին, որ ծառայել է Ալեքսեյ Միխայլովիչ ու Ֆյոդոր Ալեքսեևիչ թագավորների օրոք, կատարելով «ձեր թագավորական ապարանքների ու եկեղեցիների բարձրադիր պատերին զարդագրեր ու այլ գեղանկարչական գործեր, նաև 25 տարի ծառայելով մատանապետ և տարբեր պաշտոններում, ես՝ ձեր ծառան, որը անիրավորեն պաշտոնաթող եմ, իսկ իմ ազգականները ծառայել են ձեզ՝ մեծն տիրակալների արքունիքում սեղանապետ, իսկ ես՝ ձեր ծառան, այժմ ոչ մի պաշտոնի նշանակված չեմ»²⁹:

Լազար Բելսկու հետագա ճակատագրի մասին մենք տեղեկություն չունենք, սակայն հայտնի է, որ իր մասնագիտությունը նա ժառանգեց որդուն՝ Իվաշկո Լազարևին, որն զբաղվում էր արդեն ոչ թե հոգևոր, այլ աշխարհիկ գեղանկարչությամբ:

Մոսկվա ժամանող ու 70-ական թվերին այստեղ ապրող հայերի միջոցով կապեր են հաստատվում Մոսկվայի Պատրիարքության ու Հայ Եկեղեցու միջև: 1672 թ. Գանձասարի արդեն հիշատակված Պետրոս կաթողիկոսը դիմում է մի ուղերձով ռուսական աշխարհիկ ու հոգևոր իշխանություններին: Այս ուղերձով ռուսաց թագավորին նա անվանում է քրիստոնեության պաշտպան, որն իր հզորությամբ գերազանցում է մյուս բոլոր երկրների տիրակալներին: Հայոց կաթողիկոսն ընդգծում է այն, որ հայերը քրիստոնյա են, վկայակոչելով այն համաքրիստոնեական սրբություններն ու մասունքները, որոնք գտնվում են «Գանձասարի սրբատեղում» ու որոնց երկրպագում են նաև ռուսները: Պետրոս կաթողիկոսի միտքն այն է, թե ռուս թագավորի վրա է ծանրացած քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրման ու Ռուսիայի շուրջ համախմբման առաքելությունը: Այս նույն

²⁷ *ՏԿ՝ Ս. Успенский А. И. Царские живописцы и иконописцы XVII века. Словарь. М., 1910, т. 2, с. 236—241, 244.*

²⁸ *ՏԿ՝ Ս. Молева Н. М. О художниках Бельских. — Вестник АН Арм. ССР. Общественные науки. 1974, № 8. Հետագա բոլոր տեղեկությունները Բելսկու մասին՝ նշված հոդվածից:*

²⁹ ЦГАДА, ф. 396, оп. 1, ч. 19, № 30422.

միտքն ավելի ակնհայտորեն է արտահայտված ուղերձի վերջում. «Եվ աղաչում ենք Տեր Աստծուն, որ ավելի հզորացնի ու հաստատի քո երկիրն ու գովքը, ու հնազանդեցնի բոլոր թշնամիներին քո ոտքերի տակ, որպես Սողոմոնը, ու որ մեր ժողովրդին էլ պաշտպան լինես՝ ու մենք ամբարիշտների մեջ չմնանք սուսաց փրկության, ու թող Տեր Աստված շնորհի քեզ՝ սուրբ թագավոր Կոստանդինի ու մյուսների հետ թագավորել երկնային թագավորության մեջ ամբողջ քո ազնվագույն տոհմով հանդերձ»³⁰:

Սա նույն «Մոսկվա-երրորդ Հոռն» գաղափարն է, որը ճանաչում գտավ և Հայ եկեղեցու կողմից ու դրանով իսկ դարձավ հայ ժողովրդի ազատագրական շարժման ծրագիր: Ռուս թագավորին Հայ եկեղեցու բարձրաստիճանավոր հոգևորականներից մեկի՝ դիմելու փաստն ինքնին նշանակում էր, որ հայերը ռուսաստանյան կողմնորոշում են ընտրել, գաղափարական հիմքեր ստեղծելով ռուս-հայկական քաղաքական, տնտեսական, մշակութային ու այլ կապերի համար:

Հայ և ռուս եկեղեցիների մերձեցման հաջորդ քայլը կատարեց Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցին՝ իր ժամանակի առաջադեմ գործիչներից մեկը: Նրա անվան հետ է կապված Մոսկվայի ռուս և այլ ժողովուրդների ուղերձը «հզորագույն ու անհաղթ օգոստոսափառ կայսեր», որը գրված էր լատիներեն ու պահպանվել է Պոսոլսկի Գերատեսչության գործերում³¹:

Ալեքսեյ Միխայլովիչը բյուզանդական կայսրերի օրինակով անվանվել է «օգոստոսափառ կայսր», որը բացի այդ իշխում է ոչ միայն ռուս, այլ նաև «այլ ժողովուրդների վրա»—և այս հանգամանքը նշանակում է ռուսաց թագավորի համաշխարհային միապետական իշխանության իրավունքի ճանաչում: Այս միտքը հաստատվում է Հակոբ

Զուղայեցու ուղերձի ամբողջ տեքստում, ուր «ուղղելով Բարձրյալին անհամար աղոթքներ՝ թագավորի բարեկեցության համար» ու «Հայ եկեղեցու աղոթքները ամբողջ թագավորության անխող երջանկության ու անվերջ շարունակվող հաղթանակների մասին, որոնք պիտի տապալեն ու ջախջախեն լաչի թշնամիներին», հայոց կաթողիկոսը, «ապավինելով օգոստոսափառ կայսեր մըշտական ողորմածությանը՝ ինչպես դեպի օտարերկրացիք, այնպես էլ դեպի հայրենակիցները» ճանաչելով նրան որպես հավատի պահապան ու պաշտպան, ճնշվածների հովանավորող, «ծնկաչոք» խնդրում է՝ «մեզ, տարաբախտներին՝ սատար կանգնել»: Ուղերձում նկարագրված է հայերի ծանր վիճակը Պարսկաստանում, որտեղ «պարսիկ պաշտոնյաները մեր ու մեր եկեղեցու վրա սարսափելի հարկ են դրել ու մեզ, որ մեր աղքատության պատճառով չենք կարող մոծել այդ վարկը, քշում են բանտ, տանջում ու ծվատում են»:

Ռուս աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների պատասխանն անհայտ է, քանի որ բանակցությունները գաղտնի էին ու երկու կողմն էլ խուսափում էին հրապարակայնությունից, սակայն պետք է ենթադրել, որ Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի պատվիրակների հետ կայացած գրույցի ժամանակ տրվել է համապատասխան հավաստիացում, որ հայ ժողովրդին կցուցաբերվի օգնություն: Դա հաստատվում է նաև այն փաստով, որ 1674 (կամ 1677 թ.) Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը Էջմիածնում հրավիրեց հայ ավագանու և հոգևորականության 12 անհատու ներկայացուցիչների գաղտնի խորհրդակցություն, որի ընթացքում ընդունվեց որոշում՝ համագործակցություն սկսել վրաց ազատագրական շարժման գործիչների հետ և պատվիրակներ ուղարկել Եվրոպայի մի շարք երկրներ՝ ռազմական օգնության վերաբերյալ բանակցություններ վարելու առաքելությամբ: Ռուսաց թագավորին դիմելու մասին տվյալներ չկան, չնայած որ Հակոբ Զուղայեցու մեջբերված ուղերձը Ալեքսեյ Միխայլովիչին հարկադրում է չբա-

³⁰ ЦГАДА, ф. Сношения России с Арменией, д. 2, л. 1—2. Ընդգծումը՝ մերն է:

³¹ Նույն տեղում, л. 5—6. Ուղերձում ամսաթիվը չի նշված: Պոսոլսկի Գերատեսչությունում գրանցված է ստանալու օրը՝ 1673 թ. հունվարի 3-ին:

ցառել, որ Ռուսաստանի հնարավոր օգնության մասին խոսք եղել է:

Հակոբ Զուղայեցու գլխավորած պատվիրակությունը մեկնում է Հունաստան, այնտեղից՝ Կոստանդնուպոլիս (Ստամբուլ): Սակայն կաթողիկոսի հանկարծամահը 1680 թ. խախտեց բոլոր ծրագրերը. բացառությամբ Սյունիքի մելիքի որդի Իսրայել Օրու, որը շարունակեց ճանապարհը, պատվիրակության մնացած բոլոր անդամները որոշեցին վերադառնալ հայրենիք:

Միայն 21 տարի անց Իսրայել Օրին Միհաս վարդապետի ուղեկցությամբ, անցնելով բազմաթիվ փորձությունների միջով, 1701 թ. հուլիսի 7-ին ժամանեց Մոսկվա և Հայ եկեղեցու ու դարաբաղյան մելիքների անունից սկսեց բանակցություններ ուսական պետական ու հոգևոր գործիչների հետ, հանդիպեց Պետրոս 1-ին: Սկսվեց ուս-հայ քաղաքական ու կրոնական հարաբերությունների նոր դարաշրջան:

